ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

21 «դեկտեմբերի» 2018 թվականի № 189-Ա

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի № 1721-Ն որոշմամբ սահմանված՝ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող, ՀՀ օրենսդրությանը համապատասխան գրանցված հասարակական կազմակերպությունների ընտրության, գումարի տրամադրման կարգի ու պայմանների 10-րդ կետի դրույթներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 թվականի հունվարի 16-ի № 02-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի եզրակացությունը.

Պարզվեց, որ 2018 թվականի դեկտեմբերի 10-ին դիմում ներկայացրած կազմակերպություններից «Սպառողների աջակցման կենտրոն» ՀԿ-ն (այսուհետ՝ Կազմակերպություն) ներկայացրել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018թ. դեկտեմբերի 10-ի թիվ ԱԱ-3265-Ի տեղեկանքը, համաձայն որի՝ Կազմակերպությունը 2017 թվականի դեկտեմբերի 7-ից 2018 թվականի դեկտեմբերի 7-ը ընկած ժամանակահատվածում մասնակցել է Հանձնաժողովի կողմից անցկացրած 87 նիստերից՝ 12-ին, ինչը սակայն չի բավարարում ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 1721-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված հավելվածի 5-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջը: Կազմակերպությունը 2018 թվականի դեկտեմբերի 13-ի գրությամբ ներկայացրել է Հանձնաժողովի կողմից 2018 թվականի դեկտեմբերի 13-ին տրամադրված թիվ ԱԱ-3290-Ի տեղեկանքը, ըստ որի Կազմակերպությունը մասնակցել է դեկտեմբերի 12-ին կայացած հանձնաժողովի ևս 2 նիստերի:

Հանձնաժողովի կողմից քննարկվել է այս հանգամանքը, ինչի արդյունքում Հանձնաժողովը հանգել է այն եզրահանգման, որ Կազմակերպության կողմից ներկայացված 2-րդ տեղեկանքը չի կարող հաշվի առնվել, քանի որ Որոշման հավելվածի 5-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությամբ ամրագրված «վերջին մեկ տարվա ընթացքում» եզրույթը մեկնաբանվում է որպես Կազմակերպության կողմից մասնակցության դիմումի ներկայացմանը նախորդող մեկ տարվա ժամանակահատված, և նման հանգամանքի անհամապատասխանությունը հանդիսանում է կազմակերպության կողմից ներկայացված դիմումի մերժման հիմք՝ համաձայն Որոշման հավելվածի 11-րդ կետի:

«Սպառողների խորհրդատվության կենտրոն» և «Բնակարանային կոմունալ ոլորտի աշխատողների միավորում» հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված դիմումները համապատասխանել են Որոշման հավելվածով սահմանված պահանջներին:

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող ընտրել ՀՀ օրենսդրությանը համապատասխան գրանցված՝ «Սպառողների խորհրդատվության կենտրոն» և «Բնակարանային կոմունալ ոլորտի աշխատողների միավորում» հասարակական կազմակերպություններին:
2. Մերժել «Սպառողների աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության ընտրությունը:
3. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնի պետ Սվետլանա Թումանյանին՝ ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի № 1721-Ն որոշմամբ սահմանված կարգի և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 թվականի փետրվարի 9-ի № 16-Ա հրամանով հաստատված ընթացակարգի համաձայն իրականացնել գումարների տրամադրումն ընտրված կազմակերպություններին:
4. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հովհաննես Բուրմանյանին՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում ապահովել սույն հրամանի պատճենի հանձնումն ընտրված կազմակերպություններին:
5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով և այն կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:
6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության գլխավոր քարտուղարին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

12/21/2018

X

VERIFIED OCSP 21-Dec-18 16:00:34 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118